ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. հուլիսի 3-ից 9-ը Ինչեոն (Կորեայի Հանրապետություն)՝ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Իրինա Ղափլանյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Իրինա Ղափլանյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>**

   Ինչեոն (Կորեայի Հանրապետություն)

   2019թ. հուլիսի 3-ից 9-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   Կանաչ կլիմայի հիմնադրամ (GCF)

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

   Մասնակցություն՝ Կանաչ կլիմայի հիմնադրամի (GCF) ղեկավար խորհրդի 23-րդ հանդիպմանը:

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ</u>**

Կանաչ կլիմայի հիմնադրամի (GCF) ղեկավար խորհրդի 23-րդ հանդիպումը հարթակ հանդիսացավ մասնակից երկրների համար, որոնք իրենց գիտելիքներն ու փորձը փոխանցեցին Կանաչ կլիմայի հիմնադրամին՝ առաջարկելով տարբեր աջակցման ծրագրեր: Հանդիպումը նպաստեց կլիմայի փոփոխության ռիսկերի, առաջնահերթությունների, խնդիրների լուծման, ներդրումների վերաբերյալ հարցերի քննարկման համար:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց հետևյալ օրակարգային հարցերին.

- Կանաչ կլիմայական հիմնադրամի (GCF) ղեկավար խորհրդի 22-րդ հանդիպման զեկույցի ընդունում,
- Խորհրդի որոշումները, որոնք առաջարկվել են Խորհրդի քսաներկուերորդ և քսաներեքերորդ հանդիպումների միջև,
- Քարտուղարության գործունեության վերաբերյալ զեկույցի ներկայացում,

- Խորհրդի հանձնաժողովների, պանելիների և խմբերի կողմից զեկույցի ներկայացում,
- Ֆինանսավորման հետ կապված առաջարկների քննարկում,
- Կանաչ կլիմայական հիմնադրամի (GCF) քաղաքականության գնահատում,
- Խորհրդի առաջիկա հանդիպումների կազմակերպման և իրականացման վերաբերյալ քննարկում,
- Հանդիպման ամփոփում:

Օրակարգի 5-րդ հարցը Քարտուղարության գործունեության զեկույցի վերաբերյալ էր: Այդ առնչությամբ ես հանդես եկա ելույթով, մասնավորապես կարևորելով անհրաժեշտությունը, որ Քարտուղարությունն հզորացնի իր ներուժն՝ ավելի արդյունավետ գործելու նպատակով, ինչը հստակ արձանագրված է նաև անկախ գնահատող խմբի՝ Հիմնադրամի գործունեության իրականացման վերաբերյալ հաշվետվության մեջ: Քարտուղարության կողմից ներկայումս իրականացվող նախաձեռնությունները համարվում են առանցքային՝ համալրման համատեքստում Հիմնադրամի կողմից արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Այս կապակցությամբ ես կոչ արեցի Քարտուղարությանը շարունակել հնարավոր ջանքերը, հստակեցնելու Հիմնադրամի հասանելիության հնարավորությունները երկրների և հավատարմագրված կազմակերպությունների համար:

Իմ ելույթում նշեցի նաև որ՝

- պետք է ավելի հստակ սահմանել Հիմնադրամի գործառնական ընթացակարգերը, որպեսզի թույլ տալ երկրներին և հավատարմագրված կազմակերպություններին կրճատելու նախագծային գաղափարների ներկայացման և խորհրդի կողմից հաստատման միջև ընկած ժամանակահատվածը: Այս առնչությամբ Քարտուղարության կողմից երկրորդ մակարդակում ներկայացվող առաջարկությունները կարող են լավ սկիզբ հանդիսանալ, սակայն արդյունքները և առաջարկությունները անհրաժեշտ է արագ իրականացնել:
- ողջունելի է Գործադիր տնօրենի ջանքերը համալրման համատեքստում տեղեկատվության տրամադրման տեսանկյունից: Դա պետք է շարունակական լինի և մենք պատրաստակամ ենք աջակցել հաջող և հավակնոտ համալրման հարցում:
- Անկախ գնահատման խմբի կողմից ներկայացված զեկույցում նշվեց, որ Հիմնադրամի՝ ներկայումս իրականացվող ծրագրերը բախվում են բազմաթիվ խնդիրների և հատկացումների ցածր մակարդակը մտահոգությունների տեղիք է տալիս: Եվ Քարտուղարությունը նկատի կառնի այդ հանգամանքը և կարագացնի ծրագրի իրականացման գործընթացը:

- Հայտնեցի մեր պատրաստակամությունը աջակցելու Քարտուղարությանը շարունակել իր ներգրավվածությունը ռազմավարական պլանի մշակմանը՝

ունենալով փոփոխությունների հստակ տեսլական, նախանշված սահմանափակ և հատկորոշված արդյունքներով ոլորտներ՝ համաձայն ռազմավարական պլանի նախագծի: Ելույթս հասանելի է 33.45 րոպեից հետևյալ հղմամբ՝ https://metafusion-a.akamaihd.net/190705_6184_GCF_B23_Incheon/lecture_64813_un.mp4

- Օրակարգի 8-րդ կետի a և c ենթակետերի վերաբերյալ քննարկումները հետաձգվեցին, իսկ նույն կետի b ենթակետի առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ Կոնսենսուսի բացակայության պարագայում որոշումների կայացման հարցը խնդրահարույց էր: Որոշում կայացվեց պաշտոնականի փոխարեն իրականացնել ոչ պաշտոնական նստաշրջան: Ի թիվս բազմաթիվ հարցերի, բարձրացվեց նաև համալրման պայմանականության հետ կապված խնդիրը: Ես առաջարկեցի խորհրդի անդամներին տարանջատել առաջարկվող տեքստի տեխնիկական ասպեկտները հայեցակարգային համաձայնագրից, ինչպես նաև նշեցի, որ պայմանականությունը ամբողջ գործընթացը դարձնում է աննկարագրելի բարդ և խոչնդոտում է արդյունավետությանը:

Որոշում կայացվեց վերանայել տեքստը՝ հիմնվելով առաջարկությունների վրա, գտնել ընդունելի տարբերակը և կայացնել համապատասխան որոշում: Երկու տարածաշրջանային խմբերի գրեթե բոլոր անդամները եկել էին համաձայնության, բացառությամբ Սաուդյան Արաբիայի ներկայացուցչի, ով բավական վիճահարույց էր: Իմ հետ ունեցած առանձնազրույցի արդյունքում նա պատրաստակամություն հայտնեց համագործակցելու: Համանախագահողի խորհրդականի հետ իմ կողմից տարված առանձին աշխատանքների արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց վերանայել որոշումը, որի փոփոխված տարբերակը շուտով կներկայացվի Խորհրդի անդամներին:

Երեկոյան դռնփակ գործադիր նիստի ընթացքում քննարկեցինք անկախ խմբերի ղեկավարների հնարավոր վերանշանակման, գնահատման և համալրման վերաբերյալ հարցը:

Օրակարգի 12-րդ կետի d ենթակետը վերաբերում էր Կանաչ կլիմայի հիմնադրամի համալրման սցենարները նախանշող ռազմավարական ծրագրային փաստաթղթին: Ես այս առնչությամբ ևս ելույթ ունեցա՝ շնորհակալություն հայտնելով Քարտուղարությանը նման համապարփակ փաստաթուղթ մշակելու համար: Ես նշեցի, որ այն ենթադրում է միայն մեկ սցենար՝ «Հետևողականություն ազդեցության նկատմամբ» և Կանաչ Կլիմայի Հիմնադրամի առաջին համալրման ծրագրային ուղղությունների ուղեկցող փաթեթը: Ողջունեցի Քարտուղարության ջանքերը փոփոխության տեսությունը մշակելու համար, ինչն աջակցում է ծրագրային փաստաթղթին, մասնավորապես արդյունքների ուղղությունների վերակազմավորմանը՝ 8-ի փոխարեն 4 կլաստերի: Վստահություն հայտնեցի, որ վերանայված կառուցվածքը հստակեցնում և ապահովում է լավ հիմք Կանաչ Կլիմայի Հիմնադրամի համար զարգացող երկրներում հիմնական կլիմայական ուղղությունները հասցեագրելու համար: Այս փաստաթղթի հիմնական սկզբունքներն ու ուղղությունները լավ մշակված են և լիովին ընդունելի են մեր համար, մասնավորապես, Կանաչ Կլիմայի Հիմնադրամի միջոցների հատկացման կենտրոնում երկրներին պահելու

անհրաժեշտությանը: Այնուամենայնիվ խնդրեցի մի քանի պարզաբանումներ հետևյալ կետի վերաբերյալ. Փաստաթուղթում նախանշված են որոշ թիրախներ, որոնք դեռևս ամրագրված կամ հստակ չեն. Օրինակ՝ հարմարվողականությունը ընդլայնելու նպատակը, կամ ուղղակի հասանելիություն ունեցող կազմակերպությունների համար հատկացումների հասանելիության ավելացումը: Կարելի է արդյո՞ք հստակեցնել այդ թիրախները և եր՞բ դրանք կվերջնականացվեն:
Անդրադարձա նաև անհրաժեշտյանը վերանայման գործընթացում հաշվի առնել Անկախ գնահատման խմբի առաջարկությունները և դիտողությունները Հիմնադրամի Հիմնադրամի գործունեության իրականացման վերաբերյալ հաշվետվության մեջ: Շատ կարևոր է, որ Կանաչ Կլիմայի Հիմնադրամը իր առաջին համալրման ընթացքում նկատի առնի ներկայիս ծրագրային պորտֆոլիոյի քաղված դասերը և այլոց լավագույն փորձը:: Ելույթս հասանելի է 14.45 րոպեից հետևյալ հղմամբ՝ https://metafusion-a.akamaihd.net/190705_6184_GCF_B23_Incheon/lecture_64821_un.mp4

Երկրորդ օրվա քննարկումների հիմնական թեման Որոշումների կայացման գործիքն էր: Վերջինիս առնչությամբ ես ներկայացրեցի երկու տեսակետ.

- Նախ համոզված լինել, որ պաշտոնապես հայտարարել ենք փոխհամաձայնեցված որոշում կայացնելու անհրաժեշտության մասին՝ կոնսենսուսի բացակայության դեպքում քվեարկության մեխանիզմի ընդունման հարցում: Հարկ է նշել, որ այս կետը օրակարգում է եղել 2011թ.-ից ի վեր և ճիշտ ժամանական է համաձայնության գալ վերջինիս շուրջ: Այնուամենայնիվ, այս հարցի շուրջ 4-ից 5 ամիս ծանր աշխատանք է տարվել, և ես կարծում եմ, որ մենք պետք է համակարգված իրականացնենք կատարված աշխատանքը և ապահովենք փոխադարձ համաձայնությամբ ձևակերպված տեքստ:
- Ըստ էության՝ մենք վստահ ենք, որ ընթացակարգերի շրջանակի և քվեարկության գործընթացի տեքստերը հետագա լրամշակման կարիք պահանջում: Մասնավորապես, հաշվի առնելով խորհրդի անդամների տեսակետներն ու առաջարկությունները՝ գտնել համընդունելի տարբերակ: Կարևոր է նաև խուսափել ընդհանուր սահմանումներից և հատուկ հղումներ ներկայացնելուց՝ հստակություն մտցնելու և անորոշությունից խուսափելու համար:

Այս օրակարգային կետի շուրջ բանակցությունները տևեցին մինչև առավտյան ժամը 03.30-ը, և բարեբախտաբար կողմերը եկան ընդհանուր հայտարարի:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

X

Իրինա Ղափլանյան